ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

17 նոյեմբերի 2026թ. **N 674-Ն**

ՈՐՈՇՈՒՄ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 724-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի մայիսի 30-ի «Երևան քաղաքում փողոց վերանվանելու մասին» N 724-Ն որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի.

1) Նորքի փողոցի 1-ին նրբանցքն (սկսվում է Նորքի փողոցի հ.151 և հ.153 հասցեների հարակից տարածքից և Նորքի գերեզմանատան մոտով հասնում մինչև Գյուրջյան փողոցի սկզբնամաս) անվանափոխել հայ ճարտարագետ և գյուտարար Հովհաննես Ադամյանի անվամբ՝ **«Հովհաննես Ադամյան փողոց»,**

2) Սերո Խանզադյան փողոցի հ.65 և հ.56 տնատիրություններից մինչև հ.152 և հ.175/4 տնատիրություններ տանող ճանապարհահատվածն անվանակոչել **Նորքի փողոց,**

3) Նորքի փողոցի 2-րդ նրբանցքն (սկսվում է Նորքի փողոցի հ.122 հասցեի հարակից տարածքից, Գ.Հովսեփյան փողոցը հատելով և շրջանաձև պտտվելով հասնում հ.9 հասցեի հարակից տարածք) անվանափոխել **Նորքի փողոց, 1-ին նրբանցք,**

4) Հովհաննես Ադամյան փողոցի հ.01-009-0105-0041 կադաստրային ծածկագրով գույքից սկսվող և հ.01-009-0001-0061 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Հովհաննես Ադամյան փողոց, 1-ին նրբանցք,**

5) Հովհաննես Ադամյան փողոցից սկսվող և հ.01-009-1084-0001 կադաստրային ծածկագրով ճանապարհ հասնող հատվածն անվանակոչել **Հովհաննես Ադամյան փողոց, 2-րդ նրբանցք,**

6) Հովհաննես Ադամյան փողոցից սկսվող և հ.01-009-0064-0011 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Հովհաննես Ադամյան փողոց, 1-ին փակուղի,**

7) Հովհաննես Ադամյան փողոցից սկսվող հ.01-009-1097-0001 կադաստրային ծածկագրով ճանապարհահատվածն անվանակոչել **Հովհաննես Ադամյան փողոց, 2-րդ փակուղի,**

8) Հովհաննես Ադամյան փողոցից սկսվող հ.01-009-1086-0001 կադաստրային ծածկագրով ճանապարհահատվածն անվանակոչել **Հովհաննես Ադամյան փողոց, 3-րդ փակուղի:»:**

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝  **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 17
Երևան